# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

N 73 Ա

..25.. մարտ 2024թ.

ք.Արտաշատ

**«ՎԵԴՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ «ՎԵԴՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 26-Ի N193 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 37-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023թվականի հունվարի 5-ի «Վեդու բժշկական կենտրոն» և «Մասիս բժշկական կենտրոն » փակ բաժնետիրական ընկերությունների կանոնադրական կապիտալները նվազեցնելու, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման եվ ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին անշարժ գույք ամրացնելու եվ հայաստանի հանրապետության առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական ոչ առեվտրային կազմակերպությանն անժամկետ եվ անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույք տրամադրելու մասին N 6-Ա որոշումը

Որոշում եմ՝

1. «Վեդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը, բաժնետոմսերի մարման միջոցով նվազեցնել 4800000(չորս միլիոն ութ հարյուր հազար )դրամով:

2.Հաստատել «Վեդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2021թվականի հունվարի 27-ի թիվ 21 որոշմամբ հաստատված «Վեդու

բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 17080000 (տասնյոթ միլիոն ութսուն հազար )դրամ, որը կազմում է 427(չորս հարյուր քսանյոթ) հատ 40000(քառասուն հազար) դրամ անվանական արժեքով հասարակ(սովորական) բաժնետոմսեր:

Ընկերության կողմից թողարկված բոլոր 427բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են»:

3.Հանձնարարել . «Վեդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ դիմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման համար:

4.Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Արարատի մարզպետի 2023թվականի հուլիսի 26-ի «Վեդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու եվ «Վեդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին N193որոշումը:

Восстановимая подпись

X

Պարտականությունները կատարող՝ Подписано: NAZARETYAN ARTAVAZD 2409881092 Ա.Նազարեթյան